ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 782 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 110-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2023 թվականի փետրվարի 10-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնների ընդլայնում» ծրագրի մասին» N 110-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Այսոլուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00909659) 2026 թվականի հոկտեմբերի 29-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 9 փաթեթ ցանցային մալուխների ձեռքբերում՝ 813,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Տիիլ ինկ» ընկերության հետ (Deel Inc, Սան Ֆրանցիսկո, Կալիֆոռնիա, Ամերիկայի Միացյալ Նահանգներ) 2025 թվականի հոկտեմբերի 27-ի պատվերով

իրականացվող գործարքը, որով նախատեսվում է 2026 թվականի նոյեմբերի 12-ից մինչև 2027 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում մարդկային ռեսուրսների կառավարման համակարգչային ծրագրի արտոնագրի բաժանորդագրության ձեռքբերում՝ 40,328.88 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Սթրաքթ» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 07900546) 2026 թվականի նոյեմբերի 3-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Թումո Մասիս» կենտրոնի շինարարական աշխատանքների իրականացում՝ 11,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

26.11.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ